# Բացատրական բառարան

## Վիճակագրական տերմիններ

**Համախառն ներքին արդյունք (ՀՆԱ**) - Որոշակի ժամանակահատվածում (սովորաբար հաշվարկվում է եռամսյակային կամ տարեկան կտրվածքով) տվյալ երկրի սահմաններում արտադրված վերջնական ապրանքների և ծառայությունների շուկայական արժեքն է:

**ՀՆԱ դեֆլյատոր** - Ընթացիկ գներով հաշվարկված ՀՆԱ հարաբերությունն է նախորդ տարվա համադրելի գներով հաշվարկված ՀՆԱ ծավալին:

**(Մասնավոր հատվածի կամ տնային տնտեսությունների) տնօրինվող եկամուտ** – Հարկերից հետո ստացվող եկամուտ, որի մի մասը տնային տնտեսությունները խնայում են, իսկ մյուս մասը ուղղում են վերջնական սպառմանը:

**Սպառողական գների ինդեքս (ՍԳԻ) – 12-ամսյա գնաճ** - Ցույց է տալիս տվյալ ժամանակահատվածի սպառողական գների ընդհանուր մակարդակի փոփոխությունը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի գների մակարդակի համեմատությամբ:

**Անվանական ցուցանիշներ** - Տվյալ ցուցանիշի արժեքն է՝ հաշվարկված ընթացիկ գներով:

**Իրական ցուցանիշներ** - Ցույց է տալիս համապատասխան անվանական ցուցանիշի գների՝ համապատասխան ինդեքսով ճշգրտված մակարդակը կամ տվյալ ցուցանիշի արժեքը գների անփոփոխ մակարդակի պայմաններում:

**Համախմբված բյուջե** - Պետական և համայնքների բյուջեները միասին վերցրած: Պետական և համայնքի բյուջեները, համապատասխանաբար՝ պետությանը և ինքնակառավարման մարմիններին Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագրերն են:

**ՀՀ պետական բյուջեի եկամուտներ-** Օրենսդրությանը համապատասխան պետական և համայնքների բյուջեներ մուտքագրվող, համապատասխանաբար՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տնօրինվող դրամական միջոցներ: Բյուջեի եկամուտները ձևավորվում են հետևյալ հիմնական աղբյուրներից՝ հարկային եկամուտներ և պետական տուրքեր, այլ եկամուտներ և պաշտոնական դրամաշնորհներ:

**ՀՀ պետական բյուջեի ծախսեր**- Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին օրենսդրությամբ վերապահված գործառույթների ֆինանսական ապահովման նպատակով համապատասխան բյուջեներից տրամադրվող դրամական միջոցներ: Բյուջեի

ծախսերը բաժանվում են երկու խոշոր խմբի՝ ընթացիկ ծախսեր և ոչ ֆինանսական ակտիվների գծով գործառնություններ (կապիտալ ծախսեր):

**Բյուջեի պակասուրդ (-), հավելուրդ (+) -** Բյուջետային տարվա ընթացքում եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցման հետևանքով ձևավորվում է բյուջեի պակասուրդ, հակառակ պարագայում՝ հավելուրդ: Պակասուրդի առկայության դեպքում այն ֆինանսավորվում է ներքին կամ արտաքին աղբյուրների հաշվին:

**Եկամուտների մեջ պաշտոնական դրամաշնորհներ -** Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից պետական բյուջեին տրամադրված դրամաշնորհներն ու այլ աղբյուրներից ստացվող պաշտոնական դրամաշնորհները:

**Սուբսիդիա կամ ծախսերի մեջ դրամաշնորհներ -** Պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման նպատակով տրամադրվող դոտացիաները և սուբվենցիաները (համայնքներին կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով պետական բյուջեից տրվող նպատակային հատկացումներ), միջազգային կազմակերպություններին տրամադրվող դրամաշնորհները և պետական հատվածի այլ մարմիններին տրվող կապիտալ դրամաշնորհները:

**Փողի զանգված** – Տնտեսությունում առկա ամբողջ փողի քանակությունը, որը ներառում է կանխիկ միջոցները (բանկային համակարգից դուրս շրջանառվող) և ռեզիդենտներից ներգրավված ցպահանջ ու ժամկետային դրամային, արտարժութային ավանդները:

**Դրամային զանգված** - ՀՀ դրամի փողի քանակությունը, որը ներառում է ոչ միայն կանխիկ միջոցները, այլ նաև ռեզիդենտներից ներգրավված ցպահանջ և ժամկետային միայն դրամային ավանդները: Փողի զանգվածի և դրամային զանգվածի տարբերությունը ներգրավված ցպահանջ և ժամկետային արտարժութային ավանդներն են:

**Փողի բազա** – ԿԲ թողարկած փողի ծավալը, որը ներառում է ԿԲ-ից դուրս շրջանառվող կանխիկը և ԿԲ-ում առևտրային բանկերի դրամով և արտարժույթով թղթակցային հաշիվների միջոցները: Ընդ որում, դրամային թղթակցային հաշիվները ներառում են բանկերի կողմից պարտադիր պահուստավորվող և ավելցուկային միջոցները:

**Դրամային բազա** – ԿԲ թողարկած ՀՀ դրամի ծավալը, որը ներառում է ԿԲ-ից դուրս շրջանառվող կանխիկը և ԿԲ-ում առևտրային բանկերի դրամով թղթակցային հաշիվների միջոցները: Ընդ որում, դրամային թղթակցային հաշիվները ներառում են բանկերի կողմից պարտադիր պահուստավորվող և ավելցուկային միջոցները: Փողի բազայի և դրամային բազայի տարբերությունը արտարժույթով թղթակցային հաշիվների միջոցներն են:

**Դոլարայնացում** – Ցույց է տալիս, թե ակտիվների կամ պարտավորությունների ընդհանուր ծավալում որքան կշիռ ունեն արտարժութային միջոցները: Ամենալայն կիրառվող

ցուցանիշներն են արտարժութային ավանդներ/փողի զանգված, արտարժութային ավանդներ/ընդհանուր ավանդներ հարաբերությունները:

**Փողի բազմարկիչ** – Փողի զանգվածի հարաբերությունը փողի բազային, որը ցույց է տալիս, թե ԿԲ-ի կողմից շրջանառության մեջ դրված փողը, շրջանառվելով բանկային համակարգում, որքան փողի առաջարկ է ստեղծում:

**Դրամային բազմարկիչ** – Դրամային զանգվածի հարաբերությունը դրամային բազային, որը ցույց է տալիս, թե ԿԲ-ի կողմից շրջանառության մեջ դրված ՀՀ դրամը, շրջանառվելով բանկային համակարգում, որքան դրամային առաջարկ է ստեղծում:

**Անվանական արդյունավետ փոխարժեքի ինդեքս** – Ցույց է տալիս տվյալ երկրի արժույթի գնի փոփոխությունը հիմնական գործընկեր երկրների արժույթների միջին կշռված զամբյուղի նկատմամբ: Որպես կշիռ վերցվում է արտաքին առևտրաշրջանառության մեջ յուրաքանչյուր գործընկեր երկրի մասնաբաժինը:

**Իրական արդյունավետ փոխարժեքի ինդեքս** – Արտաքին մրցունակության գնահատման ցուցանիշ է, որը ցույց է տալիս տվյալ երկրի հարաբերական գների փոփոխությունը հիմնական գործընկեր երկրների միջին կշռված գների նկատմամբ՝ արտահայտված միևնույն արժույթով: Որպես կշիռ վերցվում է արտաքին առևտրաշրջանառության մեջ յուրաքանչյուր գործընկեր երկրի մասնաբաժինը:

**Վճարային հաշվեկշիռ –** Վիճակագրական հաշվետվություն է, որտեղ արտացոլվում են ժամանակի որոշակի միավորի ընթացքում (սովորաբար՝ եռամսյակի, տարվա) տվյալ երկրի ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև իրականացվող բոլոր տնտեսական գործառնությունները:

**Ընթացիկ հաշիվ –** Վճարային հաշվեկշռի որոշակի խումբ գործառնությունների համակցություն, որոնք կապված են ապրանքների, ծառայությունների, սկզբնական և երկրորդային եկամուտների հետ:

**Կապիտալի հաշիվ -** Կապիտալ տրանսֆերտների ու չարտադրված ոչ ֆինանսական ակտիվների ձեռքբերման (վաճառքի) գործառնությունները՝ իրականացված երկրի ռեզիդենտների ու ոչ ռեզիդենտների միջև:

**Ֆինանսական հաշիվ** - Արտացոլում է արտաքին աշխարհի հետ կատարվող այն բոլոր գործառնությունները, որոնց արդյունքում տեղի է ունենում ռեզիդենտների արտաքին ֆինանսական ակտիվների և/կամ պարտավորությունների փոփոխություն: Ֆինանսական հաշիվը կազմված է 5 հոդվածներից՝ օտարերկրյա ուղղակի, պորտֆելային, այլ ներդրում-ներից, ֆինանսական ածանցյալներից և պահուստային ակտիվներից:

**Ուղղակի օտարերկրյա ներդրումներ** – Ուղղակի ներդրումը մի երկրի ռեզիդենտի կողմից մեկ այլ երկրի ռեզիդենտ ձեռնարկությունում ներդրումն է, որը կատարվում է տվյալ ձեռնարկությունում վերահսկողության կամ որոշումների ընդունման գործընթացում նշանակալի ազդեցության ձեռքբերման նպատակով: Պայմանականորեն օտարերկրյա ներդրումը համարվում է ուղղակի, եթե օտարերկրյա ներդրողին բաժին է ընկնում սովորական բաժնետոմսերի ավելի քան 10.0%-ը: Ուղղակի ներդրումը կարող է ընդունել այնպիսի ձևեր, ինչպիսիք են բաժնետիրական կապիտալը, վերաներդրված եկամուտը (ռեզիդենտ ձեռնարկության շահույթը/վնասը, որը չի բաշխվել/կապիտալացվել) և պարտքի գործիքները (ուղղակի ներդրողի կողմից օտարերկրյա մասնաճյուղին, դուստր ձեռնարկությանը տրամադրված փոխառու միջոցները, ինչպես նաև վարկերը և հակառակը):

**Առևտրի պայմաններ** – Արտահանման գների և ներմուծման գների հարաբերությունը՝ արտահայտված միևնույն արժույթով:

**Արտահանման FOB (**Free On Board) **գին** – Ներառում է ապրանքի գինն ու հարակից ծախսերը մինչև արտահանող երկրի սահման:

**Ներմուծման CIF (**Cost, Insurance, Freight) **գին** – Ներառում է ապրանքի գինը, ապահովագրության և բեռնափոխադրման ծախսերը մինչև ներմուծող երկրի սահման:

**Դրամական փոխանցումներ (ըստ Վճարային հաշվեկշռի) –** Դրամական փոխանցումները սահմանվում են որպես տնային տնտեսությունների՝ արտերկրից ստացած եկամուտներ, որոնք ստացվում են առավելապես արտերկիր ժամանակավոր կամ մշտական բնակության մեկնածներից:

**Աշխատողների վարձատրություն (ըստ Վճարային հաշվեկշռի)-** Աշխատողների վարձատրությունը ներառում է արտերկիր մեկնած սահմանային, սեզոնային և այլ կարճաժամկետ աշխատողների վարձատրությունը, որոնք հաշվետու երկրի ռեզիդենտ են, ինչպես նաև այն ռեզիդենտ աշխատողների վարձատրությունը, որոնց գործատուն հաշվետու երկրում ոչ ռեզիդենտ է: Աշխատողների վարձատրությունը վճարային հաշվեկշռում գրանցվում է համախառն սկզբունքով՝ ներառյալ հարկերը և նրանց կողմից արտերկրում կատարած բոլոր ծախսերը, այլ ոչ միայն նրանց փոխանցած կամ իրենց հետ բերված գումարները:

**Անձնական տրանսֆերտներ (ըստ Վճարային հաշվեկշռի) -** Անձնական տրանսֆերտները ներառում են բոլոր ընթացիկ տրանսֆերտները (դրամական և բնեղեն տեսքով) ռեզիդենտ տնային տնտեսությունների և ոչ ռեզիդենտ տնային տնտեսությունների միջև:

# ԿԲ քաղաքականությանն առնչվող տերմիններ

**Գնաճի նպատակադրման ռազմավարություն** – Գների կայունության ապահովմանն ուղղված դրամավարկային քաղաքականության ռազմավարություն է: Գների կայունությունը, որը սահմանված է գնաճի նպատակային ցուցանիշով, ձեռք է բերվում ԿԲ-ի կողմից քաղաքականության տոկոսադրույքի սահմանման միջոցով: Տոկոսադրույքն ազդում է ֆինանսական շուկայի մյուս տոկոսադրույքների, փոխարժեքի և գնաճային սպասումների վրա, որոնք իրենց հերթին ազդում են համախառն պահանջարկի, այնուհետև՝ գնաճի ցուցանիշի վրա: Քանի որ տոկոսադրույքի սահմանման և գնաճի վրա դրա ազդեցության ժամկետների միջև առկա է լագ, ԿԲ խորհուրդը տվյալ պահին տոկոսադրույքը սահմանում է ապագայի գնաճը կառավարելու նպատակով, ինչի համար որպես միջանկյալ նպատակ ընդունում է գնաճի կանխատեսված մակարդակը:

**Գնաճի նպատակային ցուցանիշ** – ԿԲ գնաճի հաշվետվությունում, Կառավարության միջնաժամկետ ծախսային ծրագրերով, Պետական բյուջեի մասին օրենքներով սահմանված գնաճի ցուցանիշ, որի ապահովմանն է ուղղված ԿԲ-ի կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականությունը:

**Գնաճի պայմանական կանխատեսում –** Գնաճի կանխատեսում՝ հիմնված անփոփոխ դրամավարկային քաղաքականության վարկածի վրա:

**Գնաճի ոչ պայմանական կանխատեսում** – Գնաճի կանխատեսում՝ հիմնված դրամավարկային քաղաքականության ենթադրյալ վարքագծի վրա, որը բխում է տոկոսադրույքների արձագանքման պարզ կամ օպտիմալ կանոններից:

**Կանխատեսվող հորիզոն** – Յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող 3 տարվա ժամանակահատվածը:

**Կարճաժամկետ կանխատեսումներ** – Տվյալ փաստաթղթի համատեքստում՝ կանխատեսվող հորիզոնի առաջին երկու եռամսյակի համար արված կանխատեսումները:

**Միջնաժամկետ կանխատեսումներ** – Կարճաժամկետ կանխատեսումների ժամանակահատվածից մինչև կանխատեսվող հորիզոնի վերջ ընկած ժամանակահատվածի համար արված կանխատեսումները:

**Գնաճի տատանումների թույլատրելի միջակայք** – Գնաճի նպատակային ցուցանիշի նկատմամբ սահմանվող միջակայք. ՀՀ պարագայում՝ 4% նպատակային ցուցանիշի նկատմամբ ±1.5 տոկոսային կետ: Միջակայքի սահմանումը ենթադրում է՝ եթե գնաճը նպատակային ցուցանիշից շեղվում է մինչև 1.5 տոկոսային կետ, ապա Կենտրոնական բանկն ավելի հանդուրժող է կարճաժամկետ շեղումների նկատմամբ: Եթե գնաճի շեղումն ավելին է, քան 1.5 տոկոսային կետը, ԿԲ-ն ավելի կտրուկ է արձագանքում գնաճային միջավայրին:

**Դրամավարկային քաղաքականության գործիքներ** – Կենտրոնական բանկի կողմից ֆինանսական շուկայում կիրառվող միջոցներ, որոնք ուղղված են դրամավարկային քաղաքականության նպատակների (հատկապես գործառնական նպատակային տոկոսադրույքի) ապահովմանը: ՀՀ կենտրոնական բանկում, ըստ անհրաժեշտության, կիրառվում են չորս խումբ գործիքներ՝ հիմնական վերաֆինանսավորման, ճշգրտող, կառուցվածքային, մշտական հնարավորության: Առավել մանրամասն տե՛ս https://www.cba.am/Storage/AM/downloads/karger/19-Announcement-instruments.pdf

**Վերաֆինանսավորման տոկոսադրույք** – ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության ուղղությունը ներկայացնող տոկոսադրույք, որը սահմանվում է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից՝ համաձայն նախապես սահմանված և հրապարակված ժամանակացույցի՝ տարվա ընթացքում 8 անգամ:

**Քաղաքականության տոկոսադրույք** – ԿԲ խորհրդի կողմից սահմանվող տոկոսադրույք, որը ֆինանսական շուկային ազդակ է հաղորդում դրամավարկային քաղաքականության ուղղության վերաբերյալ: ՀՀ-ում ԿԲ քաղաքականության տոկոսադրույքը վերաֆինանսավորման տոկոսադրույքն է: Տե՛ս **Վերաֆինանսավորման տոկոսադրույք:**

**Նպատակային տոկոսադրույք –** Միջբանկային շուկայի կարճաժամկետ տոկոսադրույքի այն մակարդակն է, որը նպատակ ունի ապահովելու ԿԲ-ն: ՀՀ-ում նպատակային տոկոսադրույքը, քաղաքականության տոկոսադրույքը և վերաֆինանսավորման տոկոսադրույքը համընկնում են:

**ՀՀ ԿԲ հիմնական գործիքի տոկոսադրույք** – ՀՀ ԿԲ-ի կողմից յուրաքանչյուր չորեքշաբթի բանկային համակարգին տրամադրվող իրացվելիության գինն է՝ ռեպո համաձայնագրերի նվազագույն տոկոսադրույքը:

**Պարտադիր պահուստավորման մեխանիզմ** – Առևտրային բանկերը պարտավոր են ներգրավված միջոցների դիմաց, ըստ ԿԲ խորհրդի որոշմամբ սահմանված դրույքաչափերի, որոշակի գումար պահուստավորել ԿԲ-ում: Պարտադիր պահուստավորման դրույքաչափերը տարբերվում են ըստ ներգրավված միջոցի ժամկետայնության և արժույթի:

**Արտարժութային ինտերվենցիա (զուտ առք կամ վաճառք)** – ԿԲ կառուցվածքային դրամավարկային գործիքներից է և ներառում է ֆինանսական շուկայում ազգային արժույթի դիմաց արտարժույթի առքի կամ վաճառքի գործառնությունները:

**Մակրոպրուդենցիալ միջոցառումներ** – Ֆինանսական համակարգի կարգավորման միջոցառումներ, որոնք ազդում են ֆինանսական միջնորդության աստիճանի, վարկավորման ծավալների ու կառուցվածքի վրա և ուղղված են ֆինանսական կայունության ապահովմանը, ֆինանսական համակարգի ռիսկերի նվազեցմանը:

# Տնտեսագիտության և դրամավարկային տեսության հայեցակարգեր, տերմիններ

**ՀՆԱ ներուժ (պոտենցիալ)** – Բնութագրում է ՀՆԱ այն մակարդակը, որը տնտեսությունը կարող է արտադրել կայուն գնաճի պայմաններում՝ առանց գնաճային կամ գնանկումային ճնշումներ ստեղծելու: Ներուժի մակարդակից ավելի բարձր/ցածր արտադրության պայմաններում ՀՆԱ ճեղքվածքը դրական /բացասական է. այս դեպքում սպառողական շուկայում ձևավորվում են գնաճային/գնանկումային ճնշումներ:

**Տնտեսական աճի (կամ այլ ցուցանիշի) երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակ** – Երկարաժամկետ ժամանակահատվածում ( 5 և ավելի տարի **)** ՀՆԱ աճը կայունանում է իր հավասարակշիռ մակարդակի շուրջ, որն իր հերթին որոշվում է տնտեսությունում առկա մի շարք հիմնարարներով: Նշված հիմնարարներից են տնտեսությունում առկա աշխատունակ բնակչության թիվը, կապիտալի պաշարը, կրթության որակը, կառավարման արդյունավետությունը և այլն:

**Ճեղքվածք (տարբեր ցուցանիշների)** - Մակրոտնտեսական ցուցանիշները, որպես կանոն, տատանվում են որոշակի տրենդի կամ կարճաժամկետ հավասարակշիռ (պոտենցիալ) մակարդակի շուրջ: Փաստացի տվյալների և կարճաժամկետ հավասարակշիռ մակարդակի միջև տարբերությունը կոչվում է ճեղքվածք: Վերջինս, ըստ էության, արտահայտում է տվյալ ցուցանիշի պարբերաշրջանային վարքագիծը (դրական, բացասական, զրոյական՝ չեզոք):

**Բնականոն գնաճ** - Բնականոն գնաճի ցուցանիշն արտահայտում է գների մակարդակի ընդհանուր միտումը և ներկայացնում է գնաճի կայուն բաղադրամասը, որն առավելագույնս զերծ է պատահական գործոնների ազդեցությունից և բնութագրվում է ժամանակի մեջ ցածր տատանողականությամբ: Այլ կերպ ասած՝ բնականոն գնաճի հաշվարկը հնարավորություն է տալիս բացահայտելու հիմնականում դրամավարկային գործոններով պայմանավորված գնաճը՝ զերծ մնալով որոշ ապրանքների և ծառայությունների սեզոնայնությունից, առաջարկի և պահանջարկի ժամանակավոր ցնցումներից, ինչպես նաև այլ անկանխատեսելի գործոնների ազդեցությունից:

**Գնաճային (գնանկումային) ճնշումներ** – Կախված տնտեսական իրավիճակից՝ գնաճի ցուցանիշը կարող է զարգանալ գների կայունության և տնտեսական հավասարակշռության համար կարևորվող գնաճի նպատակից ավելի բարձր (ցածր) տեմպերով: Վերջինս համընկնում է տնտեսությունում ավելցուկային (պակասուրդային) պահանջարկի առկայության կամ արտադրողների իրական սահմանային ծախսերի ավելացման (նվազման) իրավիճակների հետ:

**Գնային կոշտություններ** - Որևէ ապրանքի կամ ծառայության գների դանդաղ ճշգրտման հատկություն: Գների կոշտությունը կարող է պայմանավորված լինել մի շարք գործոններով՝ գների ճշգրտման բարձր ծախսատարություն (մենյուի ծախսեր), ոչ կատարյալ մրցակցային շուկաներ, անկատար տեղեկատվություն, ձեռնարկատերերի ոչ ռացիոնալ վարք, երկարաժամկետ պայմանագրեր:

**Գնաճային սպասումներ** – Գնաճի ապագա այն մակարդակը, որ սպառողները, ներդրողները և ֆիրմաները կանխատեսում ու կարևորում են սեփական որոշումների կայացման համար: Տնտեսական գործակալները սպասումներ են ձևավորում տարբեր ժամանակային հորիզոններում գնաճի հավանական զարգացումների վերաբերյալ:

**Իրական սահմանային ծախսեր** – Միավոր ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման իրական ծախսերը՝ ներկայացված աշխատավարձերի, կապիտալի, միջանկյալ հումքային ապրանքների և այլ ծախսերի տեսքով: Կիրառվում են տնտեսության գնաճային (գնանկումային) ճնշումների գնահատման նպատակով:

**Դրամավարկային պայմաններ** – Ֆինանսական շուկայի տոկոսադրույքների, փոխարժեքի, վարկավորման պայմանների ամբողջությունը, որը բնորոշում է դրամավարկային քաղաքականության ուղղության ազդեցությունը: Կախված դրամավարկային քաղաքականության ուղղությունից՝ դրամավարկային պայմանները կարող են մեղմացվել, խստացվել կամ մնալ անփոփոխ:

**Իրական տոկոսադրույք** – Անվանական տոկոսադրույքի և գնաճային սպասումների տարբերությունը:

**Չեզոք տոկոսադրույք** – Տոկոսադրույքների այնպիսի մակարդակը, որի դեպքում իրական ՀՆԱ-ն գտնվում է ներուժային ցուցանիշին մոտ, և գնաճային կամ գնանկումային ճնշումներ չկան: Այս տոկոսադրույքը որպես հիմք է ծառայում ԿԲ դրամավարկային քաղաքականության բնույթի վերաբերյալ դատողությունների համար. եթե ԿԲ տոկոսադրույքներն ավելի բարձր են, քան գնահատված չեզոք տոկոսադրույքը, ապա դրամավարկային քաղաքականությունը համարվում է զսպող, հակառակ դեպքում՝ խթանող, իսկ չեզոք դրույքին համապատասխանելու դեպքում՝ չեզոք:

**Գնաճը չարագացնող գործազրկության մակարդակ (NAIRU)** – Աշխատուժի շուկայում հավասարակշռությունը բնութագրող գործազրկության մակարդակը, որի դեպքում տնտեսությունում չկան գնաճային կամ գնանկումային ճնշումներ: Հաճախ անվանում են նաև «գործազրկության բնական մակարդակ»:

**Ոչ ավանդական դրամավարկային քաղաքականություն** – ԿԲ-ի կողմից կիրառվում է այն ժամանակ, երբ ԿԲ ավանդական գործիքները այլևս արդյունավետ չեն դրամավարկային նպատակների իրագործման համար, ուստի անհրաժեշտություն է առաջանում դրանց

զուգահեռ օգտագործել նաև լրացուցիչ գործիքներ: Տարածված ոչ ավանդական քաղաքականության տեսակներից են քանակական և որակական ընդլայնման, ապագային միտված պայմանականությամբ (state-contingent commitment/forward guidance) և արժութային ինտերվենցիաների կիրառմամբ իրականացվող քաղաքականությունները:

**Տոկոսադրույքների ստորին (զրոյական) սահման** – Կենտրոնական բանկի տոկոսադրույքների այն նվազագույն սահմանը, որից ներքև տոկոսադրույքների փոխանցման ուղին, ըստ էության, դադարում է աշխատելուց: Սովորաբար տեխնիկապես այդ սահմանը նույնացվում է զրոյական մակարդակի հետ՝ պայմանավորված կանխիկ փողի առկայության հետ, սակայն տարբերվում է ըստ երկրների և կարող է լինել ավելի բարձր կամ ցածր:

**Ռիսկի հավելավճար (երկրի)** – Ներկայացնում է համաշխարհային մակարդակով ռիսկից զերծ համարվող ակտիվների համեմատությամբ այն լրացուցիչ ռիսկը, որը կապված է որևէ երկրի ակտիվներում իրականացվող ներդրումների հետ և սովորաբար արտահայտվում է տվյալ երկրում ներդրումներից ակնկալվող լրացուցիչ եկամտաբերության պահանջով: Քաղաքական, մակրոտնտեսական, ֆինանսական անկայունության և անորոշությունների պայմաններում օտարերկրյա (նաև ազգային) ներդրողները առկա ռիսկերից ապահովագրվելու նպատակով պահանջում են եկամտի հավելավճար՝ տվյալ երկրի տնտեսությունում ներդրումներ իրականացնելու համար:

**Հարկաբյուջետային ազդակ** – Քանակական գնահատական, որը ներկայացնում է համախառն պահանջարկի ձևավորման վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը: Հաշվարկվում է եկամուտների և ծախսերի առանձին ազդակների հիման վրա և կարող է մոտարկվել որպես կառուցվածքային հաշվեկշռի տարեկան փոփոխություն:

**Կառուցվածքային հաշվեկշիռ** – Բյուջեի կառուցվածքային հաշվեկշիռը ցույց է տալիս բյուջեի եկամուտները և ծախսերը, որը համապատասխանում է ՀՆԱ ներուժի մակարդակին: Գնահատվում է բյուջեի փաստացի հաշվեկշռից զտելով ՀՆԱ ցիկլիկ ազդեցությունը, ինչպես նաև բյուջեի մեկանգամյա կամ ժամանակավոր հոսքերը:

**ՊՊ եկամտաբերության կոր** – Կորը (*yield curve*) պատկերացում է տալիս տոկոսադրույքների ժամանակային կախվածության մասին: Եկամտաբերության կորը կառուցելիս հորիզոնական առանցքի վրա վերցվում են պարտատոմսերի ժամկետայնությունները, ուղղահայաց առանցքի վրա՝ դրանց համապատասխան եկամտաբերությունները: Եկամտաբերության կորն արտացոլում է շուկայի մասնակիցների սպասումները՝ կապված գնաճային ռիսկերի և տնտեսությունում առկա անորոշությունների ու շուկայական ռիսկերի (տոկոսադրույքի, փոխարժեքի, իրացվելիության և այլն) հետ: Սովորաբար կորն ունենում է դրական թեքվածություն, ինչը ենթադրում է կարճաժամկետ

տոկոսադրույքների համեմատությամբ երկարաժամկետ տոկոսադրույքների բարձր մակարդակ:

**Ֆինանսական միջնորդություն –** Ֆինանսական հաստատության կողմից միջոցների ներգրավման և տեղաբաշխման գործընթաց, որի հետևանքով համակարգում ազատ ֆինանսական միջոցները ֆինանսական միջնորդների միջոցով ուղղվում են այնտեղ, որտեղ կա դրանց կարիքը: Ֆինանսական միջնորդության չափը բնութագրվում է *ֆինանսական համակարգի ակտիվներ/ՀՆԱ, վարկեր/ՀՆԱ, ավանդներ/ՀՆԱ* հարաբերություններով, *փողի* կամ դրամային *բազմարկիչների* միջոցով:

# Հապավումներ

ՀՀ - Հայաստանի Հանրապետություն

ԿԲ - կենտրոնական բանկ

ՌԴ - Ռուսաստանի Դաշնություն

ՀՆԱ - համախառն ներքին արդյունք

ԱՄՆ - Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ԵԿԲ – Եվրոպական կենտրոնական բանկ

ԱՄՀ – Արժույթի միջազգային հիմնադրամ

ԵՄ – Եվրոպական միություն

ՀՀ ՎԿ– Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե

տ/տ – տվյալ ժամանակահատվածը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ

եռ/եռ - տվյալ եռամսյակը՝ նախորդ եռամսյակի նկատմամբ

ա/ա – տվյալ ամիսը՝ նախորդ ամսվա նկատմամբ

ՍԳԻ – սպառողական գների ինդեքս

ԾԻԳ – ծրագրերի իրականացման գրասենյակ

ՊՊ – պետական պարտատոմս

ՊԿՊ – պետական կարճաժամկետ պարտատոմս

USD –ամերիկյան դոլար

AMD – հայկական դրամ

EUR - եվրո

RUB – ռուսական ռուբլի